ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«1227. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Պատասխանա-տու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**
1	2	3	4
Կրթական տեխնոլոգիա-ների ազգային կենտրոն	1227	11001. «Էլեկտրոնային կառավարում»	**Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) մշտադիտարկում և սպասարկում** Իրականացվել է 1414 ուսումնական հաստատություններ ընդգրկող ցանցի աշխատանքի ամենօրյա հսկողությունը. – վերահսկվել է ՀԿՑ-ի տեխնիկական սպասարկման աշխատանքը, – կատարվել է դպրոցների էլեկտրոնային հասցեների օգտագործման ստուգումը, – հաշվառվել է դպրոցների օգտագործած ինտերնետի ծավալը, – կատարվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկման աշխատանքները, իրականացվել է ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող սերվերների տեխնիկական սպասարկումը, ապահովվել է կայքերի անխափան աշխատանքը: ՀԿՑ-ում ապահովվել են. – արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանությունը, գործել են ինտերնետային պարունակությունը հնարավորինս սահմանափակող ֆիլտրային ծրագիրը, տվյալների փաթեթների դինամիկ ուղղորդումը, ցանցում եղած բոլոր համակարգիչների ավտոմատ թարմացումով հակավիրուսային կենտրոնացված համակարգը, – կապուղու ծանրաբեռնվածությունը ցուցադրող, գրանցող

			և վիճակագրական տվյալներ հավաքող առցանց համակարգի, ՀԿՑ ընթացիկ վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի, ուսումնական հաստատությունների օգտագործած ինտերնետային կայքերի և տվյալների ծավալների մասին գրանցումների համակարգի գործունեությունը, – ցանցում ընդգրկված ուսումնական հաստատությունների համար իրականացվել է վիճակագրական տվյալների հավաքման և SQL համատեղելի բազայի ու WEB սերվերի վրա տեղադրված ուսումնական հաստատությունների էջերի տեխնիկական սպասարկման, էլեկտրոնային փոստի վարման աշխատանքների իրականացումը, – կազմվել են համապատասխան ամսական հաշվետվությունները: Իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ՀՀ ԿԳՄՍՆ) աշխատակազմի համակարգիչների և ՏՀՏ միջոցների սպասարկումը: **Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործարկում և ամբողջացում** – Այս ուսումնական տարում գործարկված «Էլեկտրոնային մատյան» արդիականացված ենթահամակարգում մշակվել և բացվել է կիսամյակային (տարեկան) ամփոփաթերթը՝ ամբողջ դասարանի համար դիտելու, ներբեռնելու և տպելու հնարավորություն: – ԴԿՏՀ–ում լրամշակվել է էլեկտրոնային տարիֆիկացիա բաժինը, որը ձևավորվում է յուրաքանչյուր դպրոցի համար՝ համակարգում վերջիններիս մուտքագրումների և էլեկտրոնային մատյանում տնօրենի կողմից մուտքագրված դասաբաշխումների արդյունքում: – ԴԿՏՀ–ում մշակվել է դպրոցների կողմից մուտքագրված տվյալների հիման վրա՝ դպրոցների էլեկտրոնային

			հաստիքացուցակների ձևավորման հնարավորությունը: – Ընթացիկ հարցերի և առաջացող խնդիրների լուծման շրջանակում համագործակցվել և աջակցություն է ցուցաբերվել նախամասնագիտական և միջին մասնագի-տական ուսումնական հաստատությունների աշխատակիցներին: – Կատարվել են ԴԿՏ, ինչպես նաև՝ նախնական և միջին մասնագիտական հաստատությունների կառավարման համակարգերի տեղեկատվության մշտական ստուգման, բազաների ամենօրյա մաքրման, պարբերական թարմացումների, ուղեցույցների մշակման աշխատանքներ: – Կազմակերպվել է ամենօրյա բովանդակային և տեխնիկական աջակցություն–սպասարկում՝ դպրոցների, ուսումնարանների և քոլեջների տնօրեններին և օպերատորներին, ինչպես զրուցարանի, այնպես էլ հեռախոսային կապի միջոցներով, ինչպես նաև՝ իրականացվել են «Զրուցարանի» վարման, խորհրդատվության տրամադրման աշխատանքներ: – Իրականացվել են ՀՀ ԿԳՄՍՆ հրամաններով դպրոցների համակազմի սահմանային տեղերի փոփոխությունների համապատասխանեցումները ԴԿՏ և Հայտագրման համակարգերում: – Սկսվել են 2022-2023 ուստարում առաջին դասարան ընդունելության հայտագրման համակարգի նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես, stugum.emis.am կայքը պատրաստ է այս տարվա առաջին դասարան ընդունվող երեխաների տվյալների համապատասխանության ստուգման համար: – Կրթության տեսչական մարմնի որոշ գործառույթների թվայնացման և աշխատանքների հեշտացման շրջանակներում մշակվել են մի շարք վերլուծական թվային գործիքներ:

			– Կազմակերպվել է հանդիպում–քննարկում ԿՏԱԿ և տեսչական մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ստեղծված վերլուծական գործիքները ներկայացնելու նպատակով: – Պատրաստվել են վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների և տրամադրվել ՀՀ ԿԳՄՍՆ՝ տարբեր շահառուների և շահագրգիռ տարբեր կազմակերպությունների ներկայացնելու նպատակով: **Կրթության ոլորտի վարչական ռեգիստի վարում** – Ազգային վիճակագրական կոմիտեին է ներկայացվել 2021-2022 ուսումնական տարվա հանրակրթության տարեկան վիճակագրությունը: – ՅՈՒՆԵՍԿՕ վիճակագրական ինստիտուտին են ներկայացվել հանրակրթական դպրոցների գործունեությանն առնչվող հարցաշարերը (UIS_ED_A_2022; UIS_ED_ISC11_2022; UIS_ED_C_2022): – Հանրակրթական ուսումնական հաստա-տություններում ՏՀՏ կարիքի տարեկան գնահատման հարցաթերթերի լրամշակում, տվյալների հավաքում, մշակում: – Պատրաստվել են վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների, և տրամադրվել ՀՀ ԿԳՄՍՆ՝ տարբեր շահառուների և շահագրգիռ տարբեր կազմակերպություններ ներկայացնելու նպատակով: **ՀՀ կառավարության 2021-2026թթ. միջոցառումների**

			ծրագրով 2022 թվականին նախատեսված թվայնացման գործառույթներ – ԴԿՏՀ–ում մշակվել է նոր բաժին՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների գրադարանային ֆոնդերում առկա դասագրքերի և 2022թ. տպագրվելիք գրքերի՝ դպրոցների իրական պահանջարկի հաշվառման համար: – Մշակվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների Ediploma ավարտական փաստաթղթերի էլեկտրոնային համակարգը: **Օժանդակող և հարակից գործառույթներ** – Արարատի մարզի 107 դպրոցների շուրջ 215 տնօրենների և օպերատորների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ ԿԿՏՀ-ի գործածության և նոր գործիքների կիրառության վերաբերյալ: – Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի բովանդակային սպասարկման նոր կայքում շարունակվել է պաշարների ստեղծման գործընթացը https://support.emis.am/:
	1227	11002. «ՏՀՏ բովանդակու-թյուն և հեռավար ուսուցում»	**ՏՀՏ բովանդակության շարունակականության ապահովում և զարգացում** «Հայկական կրթական միջավայր» պորտալի և ենթակայքերի աշխատանքի կազմակերպում, ԿՏԱԿ–ի և այլ կրթական կայքերի վարում. – Կազմակերպվել է «Հայկական կրթական միջավայրի» (www.armedu.am) սպասարկման աշխատանքը, հարստացվել է բովանդակային պարունակությունը: Իրականացվել է պորտալի ենթակայքերի սպասարկումը. – «Հայկական կրթական միջավայր» ֆորում. (http://forum.armedu.am, 2556 թեմա, 88529 գրառում,

			9241 գրանցված օգտվող). կազմակերպվել են 93 նոր՝ մասնագիտական խորհրդատվություններ և կրթական գործընթացին վերաբերող քննարկումներ: – «Պաշարների շտեմարան» կայք. (http://lib.armedu.am, ավելի քան 14751 պաշար, շուրջ 9570 գրանցված օգտվող). ըստ դասակարգված բաժինների՝ տեղադրվել են 433 նոր էլեկտրոնային պաշարներ: Թեստավորման փուլում է նոր կայքը: «Հեռավար ուսուցում» համակարգում (http://elearning.armedu.am/). – Ավարտվել է «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով 2022թ. առաջին դասընթացը՝ 182 ուսուցիչների համար, ակտիվ ու արդյունավետ մասնակցություն ցուցաբերած 87 ուսուցիչներ ստացել են ԿՏԱԿ-ի հավաստագրեր: – Կազմակերպվել է «Ուսումնական գործընթացի կազմակերպման առցանց միջոցներ» թեմայով 2022թ. առաջին դասընթացը՝ 124 մասնակիցների համար: – Տարբեր առարկաների մասնագետներ վարել են 31 դասընթացներ՝ 834 գործընկեր-ուսուցիչների համար: Ինչպես նաև. – Իրականացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի (http://escs.am/am) անհրաժեշտ էջերի ռուսերեն և անգլերեն թարգմանության, կայքում նյութերի տեղադրման աշխատանքները: – Տեղադրվել են կրթական, մշակութային տեսանյութեր «Կրթական ալիքում» https://www.youtube.com/user/armeduchannel/: – Իրականացվել է ԿՏԱԿ–ի (www.ktak.am) կայքի բովանդակային սպասարկումը: – Շահագործվել են Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի (http://etwinningplus.armedu.am/), E-school

			Armenia (http://e-school.am/) և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (http://esource.armedu.am/) կայքերը: – Դպրոցների կայքերի՝ Schoolsite.am տիրույթում բնականոն շահագործմանն աջակցելու նպատակով իրականացվել է տեխնիկական սպասարկման աշխատանք և տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվական աջակցություն: **Հեռավար ուսուցման կազմակերպում** E-school Armenia նախագծի շրջանակներում իրականացվում են «Կենտրոնացված հեռավար ուսուցում» և «Էլեկտրոնային ուսուցում. Մենթոր դպրոցներ» ծրագրերը, ինչպես նաև՝ համակցված ուսուցման համար նախատեսված e-school հարթակի փորձարկման աշխատանքները: «Կենտրոնացված հեռավար ուսուցում» ծրագրի շրջանակներում. – Հեռավար ուսուցման կազմակերպման կարգին համապատասխան աշակերտները շարունակում են միանալ հեռավար իրականացվող դասընթացներին: – Հեռավար դասընթացներն իրականացվում են 1-ից 12-րդ դասարանների համար՝ ներառյալ ավագ դպրոցի առկա հոսքերը: – Հեռավար դասընթացներին հունվար-մարտ ամիսների ընթացքում մասնակցել է առնվազն 2960 աշակերտ: – Կրթական բովանդակությունն աշակերտներին մատուցվում է տեսադասերի, վեբինար հանդիպումների և էլեկտրոնային նյութերի միջոցով: – Իրականացվում է ամենօրյա աջակցություն՝ ծրագրի շահառուների համար: – Գործում է հետադարձ կապ կենտրոնացված հեռավար ուսուցման դասընթացներին մասնակից դպրոցների, աշակերտների և ծնողների հետ՝ աշակերտների բացակայությունը պարզաբանելու, խնդիրները

			վերհանելու և ծրագիրը բարելավելու նպատակով: – Իրականացվել է աշակերտների հարցում՝ հեռավար դասավանդման որակը գնահատելու նպատակով: – Կենտրոնացված հեռավար ուսուցման ուսուցիչները մշակել են վեբինար վարելու ուղեցույց: – Իրականացվում է շարունակական փորձի փոխանակում՝ կենտրոնացված հեռավար ուսուցման ուսուցիչների միջև: «Էլեկտրոնային ուսուցում. Մենթոր դպրոցներ» ծրագրի շրջանակներում. – 17 մենթոր դպրոցների 130 ուսուցիչներ իրականացնում են հեռավար դասավանդում ՀՀ 9 մարզերի 60 պատվիրատու դպրոցներում: – Ծրագրի շահառու աշակերտների թիվը առնվազն 3000 է: – Շաբաթական կտրվածքով իրականացվում է մոտ 950 ժամ հեռավար դասավանդում՝ Մենթոր դպրոցների ուսուցիչների կողմից: – Իրականացվում է մենթոր դպրոցների մենթորների շարունակական մենթորական աջակցություն՝ ԿՏԱԿ ՀՈՒԿ Որակի ապահովման խմբի կողմից: – Մենթոր դպրոցների ուսուցիչների հեռավար դասավանդման կարողությունները բարելավման նպատակով՝ իրականացվել է փորձի փոխանակում՝ կենտրոնացված հեռավար ուսուցման ուսուցիչների կողմից՝ ըստ առարկաների: – Իրականացվել է՝ (i)պատվիրատու մարզային դպրոցների աշակերտների գիտելիքների ընտրանքային գնահատում՝ հեռավար դասավանդվման արդյունավետությունը գնահատելու նպատակով (ii)պատվիրատու դպրոցների տնօրենների շրջանում հարցում՝ գնահատելու ծրագրի արդյունավետությունը և խնդիրները վերհանելու համար

			(iii)ծրագրից դուրս եկած դպրոցների աշակերտների և ծնողների շրջանում հարցում: – Մեկնարկել է նոր մենթոր դպրոցների ընտրության գործընթացը: Ծրագրին մասնակցելու համար դիմել են 41 մենթոր դպրոցներ, որոնցից փաստաթղթային գանահատման արդյուքնում կարճ ցուցակում հայտնվել են 14-ը, որոնցից այցելություն է կազմակերպվել 10 դպրոց՝ տեղում մարդկային և տեխնիկական կարողություններին ծանոթանալու և տնօրենի, ուսուցիչների ու աշակերտների հետ հարցազրույց իրականացնելու նպատակով: – Մարտի 19-ից 21-ը ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ համատեղ իրականացվել է Մենթոր դպրոցների տնօրենների և մենթորների վերապատրաստում, որի նպատակն էր ներկայացնել որակի ապահովման չափանիշներն ու ընթացակարգերը, նպաստել մենթոր դպրոցների համայնքի ձևավորմանը և լավագույն փորձի փոխանցմանը, ծանոթացնել ծրագրի հետագա գործողություններին: Իրականացվել է լավագույն մենթոր դպրոցների և մենթորների խրախուսում: E-school Armenia հարթակի փորձարկման աշխատանքների ընթացքում՝ – «Կենտրոնացված հեռավար ուսուցում» և «Էլեկտրոնային ուսուցում. Մենթոր դպրոցներ» ծրագրերի ուսուցիչները և մենթորները մասնակցել են վերապատրաստման: – Հարթակի մշակման արդյունքում իրականացվել է շարունակական խորհրդատվություն ՀՈՒԿ բաժնի փորձագետների կողմից: Շահագործվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ)

			– ՇԻՀԿ–ը հեռավար ուսուցմանն աջակցելու նպատակով «Հեռավար ուսուցման կազմակերպում» թեմայով եռօրյա դասընթացներ են կազմակերպել և անցկացրել՝ 13 դպրոցների 222 ուսուցիչների համար.
			  – Լոռու մարզ մարզ. 4 դպրոց, 60 ուսուցիչ,
			  – Գեղարքունիքի մարզ. 9 դպրոց, 162 ուսուցիչ:
			– Անհրաժեշտության դեպքում՝ ցուցաբերվել է նաև ծրագրային սպասարկման և տեխնիկական աջակցության աշխատանքներ՝ Մենթոր դպրոցների ծրագրում ընդգրկված դպրոցների համար:
			
			ԵՄ «Ի-թվինինգ+» ծրագրին մասնակցություն.
			– իրականացվել են 2022-23 թթ. դրամաշնորհային ծրագրի պայմանագրի կնքման նախապատրաստական աշխատանքները,
			– համակարգվել է ծրագրի մասնակից ավելի քան 630 դպրոցների շուրջ 890 ակտիվ ուսուցիչների աշխատանքը (այժմ իրականացվում է 380 նախագիծ),
			– 2022թ. մարտի 14-17–ը և 21-24–ը Տավուշի մարզի Նոյեմբերյան, Բերդ, Իջևան և Դիլիջան քաղաքներում անցկացվել են երկօրյա սեմինարներ «Նախագծային ուսուցումը Իթվինինգ նախագծի օրինակով» խորագրով, որին մասնակցել են մոտ 80 ուսուցիչներ: Սեմինարներն անցկացվել են ԿՀՆԱԿ հիմնադրամի առաջարկությամբ,
			– 2022թ. մարտի 22-26–ը ԿՏԱԿ–ի հեռավար ուսուցման համակարգում 35 մասնակիցների համար անցկացվել է առցանց դասընթաց՝ «Մեդիա գործիքներ» խորագրով,
			– գործարկվել է https://www.etwinning.net/ պորտալի հայերեն բաժինը (https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus.htm), թարգմանվել և տեղադրվել են անհրաժեշտ տեքստերը, ինչպես նաև՝ ապահովվել է ընթացիկ տեղեկատվության տրամադրումը:

			Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր համակարգման և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետհամագործակցության նպատակով. – Մեկնարկել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա, այդ թվում՝ սփյուռքահայ դիմորդների ընդունելության տվյալների բազայի թվային կառավարման համակարգի ստեղծման աշխատանքը, ԿՏԱԿ-ի և «Սահակյան Բաղրամյան Հիմնադրամի»-ի միջև ստորագրվել է նվիրաբերության պայմանագիր: – Տեղի է ունեցել հանդիպում ԿՏԱԿ և ՀՊՄՀ ներկայացուցիչների միջև՝ քննարկելու համագործակցության բոլոր հարթակները՝ ԿՏԱԿ գործունեության բոլոր ուղղություններով: